ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«Ղահրաման» ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Մ.Հասանյանին

Հարգելի Մ.Հասանյան,

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի(այսուհետ՝ Գնորդ) և «Ղահրաման» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև **12.01.2022թ.** -ին կնքված ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-**22/1-5** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պետք է մատակարարեր Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մատակարարումները կատարել է ուշացումներով, իսկ հունիս ամսից սկսած մատակարարում չի կատարել:

Բազմիցս դիմել ենք Վաճառողին թե՛ գրությամբ, թե՛ բանավոր ապրանքի մատակարարումը պատշաճ և ժամանակին կատարելու համար, սակայն ուշացումները շարունակվել են: Այս պահի դրությամբ մանկապարտեզը բնականոն աշխատանքը շարունակելու համար սնունդ չունի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով **«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը** հարկադրված է 2022թ. հունիսի 10-ից Պայմանագիրը միակողմանի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվի որակավորման և պայմանագրի ապահովումներ պայմանագրի չկատարված մասի չափով:

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ տնօրեն՝ **Լ. Հրությունյան**

13.06.2022թ